ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«03» հուլիսի 2024 թվականի N 997

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 08-ին անցկացվելիք արտահերթ թիվ 7 նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով

•/Նախագիծ 68-Ա / Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին

•/Նախագիծ 69-Ա / Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

•/Նախագիծ 70-Ա / Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին

•/Նախագիծ 71-Ա / «Կոտայք» ջրօգտագործողների ընկերությանը ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին:

1.2 ***Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝***

•/Նախագիծ 72-Ա / Չարենցավան համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին:

•/Նախագիծ 73-Ա / Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

•/Նախագիծ 74-Ա / Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող 07-019-0023-0003 կադաստրային ծածկագրով հողամասից 0.0198 հա ընդհանուր մակերեսով հողամասը նվիրատվությամբ հայաստանի հանրապետությանը տրամադրելու մասին:

•/Նախագիծ 75-Ա / «ՄԻՐԱԺ ՋՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Արզականի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2/74 հորատանցքի արդյունահանման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:

1.3. Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողով՝

• /նախագիծ 76-Ա / Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց հարուցելու մասին:

1.4 Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով՝

• /նախագիծ 77-Ա/ Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**